Ա Մ Ա Ջ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական կապերի հետագա զարգացմանն ու ամրապնդմանը,

ցանկանալով զարգացնել համագործակցությունը մշակույթի բնագավառում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը զարգացնում են համագործակցությունը մշակույթի՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում՝ մասնավորապես խրախուսելով.

թատերական, երաժշտական կոլեկտիվների, անհատ կատարողների և մենակատարների փոխանակումը,

կինեմատոգրաֆիայի բնագավառում համագործակցությունը՝ կինոարտադրող, կինոցուցադրող կազմակերպությունների և ձեռնարկությունների մասին տեղեկատվության փոխանակում, կինոֆիլմերի փոխանակում, կինոփառատոներին և կինոֆորումներին մասնակցություն, կինեմատոգրաֆիական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների և կինոարվեստի գործիչների միջև ուղիղ կապերին աջակցություն,

մասնակցությունը Կողմերից մեկի կազմակերպած միջազգային փառատոներին, գեղարվեստական ցուցահանդեսների և ժողովրդական արվեստի ցուցահանդեսների փոխանակումը:

Հոդված 2

Կողմերը խրախուսում են համագործակցությունն ու տեղեկատվության փոխանակումը երկու երկրների թանգարանների, գրադարանների և արխիվների միջև՝ Կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 3

Կողմերը կազմակերպում են մշակութային ժառանգության պահպանման խնդիրներին նվիրված երկկողմ սեմինարներ և գիտաժողովներ համապատասխան պետական և հասարակական կազմակերպությունների առանձին մասնագետների մասնակցությամբ:

Հոդված 4

Կողմերն օժանդակում են իրենց ներկայացուցիչների մասնակցությունը Կողմերի պետություններում կազմակերպվող մշակութային խնդիրներին նվիրված միջազգային համաժողովներին, հանդիպումներին և մրցույթներին:

Հոդված 5

Կողմերը խրախուսում են մշակույթի գործիչների միջև հանդիպումների անցկացումը, գեղարվեստական կրթության բնագավառում մասնագետների և փորձի փոխանակումը, ինչպես նաև համատեղ մշակութային ծրագրերը:

Հոդված 6

Սույն Համաձայնագրով նախատեսված գործունեության բոլոր ձևերը պետք է իրականացվեն և ֆինանսավորվեն Կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան: Ընդ որում՝ յուրաքանչյուր Կողմ ինքն է հոգում սույն Համաձայնագրի իրագործման հետ կապված ծախսերը, եթե յուրաքանչյուր առանձին դեպքում ծախսերի ֆինանսավորման այլ կարգ չի որոշվում:

Հոդված 7

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը ավարտելու մասին Կողմերի վերջին ծանուցումը ստանալու օրվանից:
Սույն Համաձայնագիրը գործում է հինգ տարվա ընթացքում և երկարաձգվում է հետագա հնգամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերից որևէ մեկը հերթական հնգամյա ժամանակահատվածը լրանալուց վեց ամիս առաջ մյուս Կողմին չի տեղեկացնում սույն

Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Աստանա քաղաքում 2006 թվականի նոյեմբերի 6-ին. երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 12-ին